



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

**ԽՕՍՔ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ԱՌ ՏԻԱՐ ԱԷՅՄՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ**

Հոգեկան ուրախութեամբ կը տեղեկանանք որ Կիրակի Յունիս 7, 1992, յաւարտ Ա. Պատարագի, Հէյվըրհիլի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ սրահին մէջ, մասնաւոր հանդիսութեան մը ընթացքին ձեզի պիտի յանձնուին Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ ձեզի շնորհուած Ա. Գրիգոր Լուսաւորիչ Ծբանշանը եւ Հայրապետական Կոնդակը:

Այս հանդիսութիւնը տեղի կ'ունենայ ձեր մեկենասութեամբ, եւ ի յիշատակ ձեր յարգելի ծնողաց Գրիգոր եւ Ծուշանիկ Տէրտէրեաններու, կառուցուած «Տէրտէրեան Սրահ»ին մէջ: Գրիգոր եւ Ծուշանիկ Տէրտէրեաններ ազգային կեանքին մէջ ծանօթ անուններ էին: Անոնք իրենց հոգածու ձեռքերուն մէջ առած էին Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին: Ձեր հայրը՝ մինչեւ իր կեանքին 112-րդ տարին, եւ ձեր մայրը՝ որպէս եկեղեցոյ պատգամաւորուհին, ամէն ջանք ի գործ դրին որպէս զի եկեղեցին ու համայնքը ունենան ամէն ապահովութիւն՝ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս:

Տէրտէրեան գերդաստանի որպէս հարազատ ժառանգորդ՝ դուք եւ ձեր ազնի տիկինը, որ անդամ է Ծխական Խորհուրդին, հաւատարմութեամբ շարունակեցիք ձեր ծնողաց բարի ու եկեղեցանուէր գործերը եւ այսօր առ ի գնահատութիւն ձեր բողոքնաւէր ծառայութիւններուն՝ կ'արժանանաք այս բարձր պատիին:

Որպէս Առաջնորդ Հայց. Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին՝ կը շնորհաւորենք ձեզ, ձեր ազնի Տիկինը եւ ձեր զաւակները, մեծապէս կը գնահատենք ձեր երկարամեայ օգտակար ծառայութիւնները եւ ձեզի ու ձեր հարազատներուն կը մաղթենք առաւել քաջատոյջ ու արդիւնաշատ տարիներ:

Միտոյ ողջունի

Խածակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ

Յունիս 5, 1992
Նիւ Եորք, Ն.Ե.